ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 14-ին՝ կիրակի.—Զատիկ: Տարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում պատարագիչ է Վեհափառ Հայրապետը:

Օրվա մեծ տոնի խորհուրդը իրեն է ձգել Հայաստանի և սփյուռքի տարբեր ծայրերից հայ ուխտավորների մի հոծ բազմություն: Մայր տաճարը և նրա շրջափակը լցված են հավատացյալներով:

Առավոտյան ժամը 11-ին թափորով և «Հրաշափառ» շարականի հնչյունների տակ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր տաճար:

Սկսվում է սուրբ պատարագի արարողությունը:

Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղեր են գրավում Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմերը, Մայր Աթոռի պաշտոնեությունը:

«Հայր մեր»-ի ժամանակ Վեհափառ Հայրապետը Հայաստանի և սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդին տալիս է հարաբերական Իր պատգամը, որը նույն երեկոյան ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը նույն հանդիսավորությամբ, թափորով և «Այսօր յարեաւ» շարականով ուղեկցվում է Վեհարանի գահասրահը:

Հանում Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և ներկաների, խոսք է վերցնում և Վեհափառ Հայրապետի Զատիկն է շնորհավորում Մայր Աթոռի յուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Արրահամյանը.

Այնուհետև Վեհափառ Հայրապետը պատասխանելով գեր. տ. Հայկազունի արքեպիսկոպոսի շնորհավորանքներին, ներկա բազմությանը ավետում է Փրկչի հրաշափառ ս. Հարությունը և պատգամում է վարել քրիստոսավայել կյանք, որպեսզի բոլորը արժանի լինեն հոգեկան ու մարմնական հարության Հիսուսով:

Բոլոր ներկաները աջահամբուրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի Զատիկը:

Զատկական հանդիսությունները ամփոփվում են Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: